ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ N ՄՇԴ-338-2023 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան « 25 » « 09 » 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Համլիկ Հակոբյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի կինոգործիչների միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող նախագահ Հարություն Խաչատրյանի, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով ժամանակակից արվեստի վարչության 2024 թվականի սեպտեմբերի 23-ի Ն/13/22146-2024 զեկուցագիրը և 2023 թվականի օգոստոսի 25-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» դրամաշնորհի հատկացման N ՄՇԴ-338-2023 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 9.1 կետը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. Պայմանագրի 4.1 կետում «2024 թվականի սեպտեմբերի 30-ն» բառերը փոխարինել «2025 թվականի հունիսի 30-ն» բառով:

1.2. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ի 3.3 կետում «2024 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «2025 թվականի հունիսի 30-ը» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական մարմին՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011042646, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն՝
«Հայաստանի կինոգործիչների միություն» ՀԿ
ք. Երևան, Վարդանանց 18
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 157000100220100, ՀՎՀՀ 02511007
Հեռ.՝ 091 27 07 76, 094 42 59 61
Նախագահ՝

Հ. Խաչատրյան
(ստորագրություն)

Կ.Տ